ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

24.02.2016 թ.

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

«Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ)

Առաջադրանքի անվանումը՝ Երևանի թիվ 135 և Գավառի թիվ 2 նորակառույց դպրոցների նախագծերի մշակման, ինչպես նաև Եղեգնաձորի թիվ 1 դպրոցի տեղում Գավառի թիվ 2 դպրոցի նախագծի տեղակապման համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների և հեղինակային հսկողության իրականացում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ APD-02

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի շրջանակներում իրականացնում է «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (ՍԱԲԾ), որի ֆինանսավորման նպատակով վարկային միջոցների մի մասը նախատեսում է ուղղել խորհրդատվական ծառայությունների վարձատրությանը:

Նորակառույց և վերակառուցվող դպրոցների պատշաճ նախագծման և հեղինակային հսկողություն համար ֆինանսական միջոցներ կհատկացվեն տեղական խորհրդատուներին՝ միկրոծրագրի ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման, ինչպես նաև հեղինակային հսկողություն իրականացնելու նպատակով:

Խորհրդատուի հետ կկնքվի երկու առանձին պայմանագիր՝

1. Միանվագ- նախագծային աշխատանքների համար,
2. Ժամանակի վրա հիմնված- հեղինակային հսկողության համար:

Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվեն Երևավի թիվ 135 և Գավառի թիվ 2 դպրոցների նախագծումը, ինչպես նաև Գավառի թիվ 2 դպրոցի համար մշակված նախագծի տեղակապումը Եղեգնաձորի թիվ 1 դպրոցի տարածքում: Կհանձնարարվեն նաև նշված դպրոցների հեղինակային հսկողության աշխատանքները:

Խորհրդատուն պետք է՝

ա) մշակի վերը նշված դպրոցների մանրամասն աշխատանքային նախագծերը,
բ) համաձայնեցնի իր կողմից մշակված նախագծերը համապատասխան կազմակերպությունների հետ,
գ) իրականացնի հեղինակային հսկողություն իր կողմից նախագծված կառույցների շինարարության ընթացքում:

Սույնով ՀՏԶՀ-ն հրավիրում է բոլոր իրավասու խորհրդատու կազմակերպություններին («Խորհրդատու») արտահայտել իրենց հետաքրքրությունը վերոնշյալ խորհրդատվական ծառայությունները («Ծառայությունները») իրականացնելու վերաբերյալ: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ Ծառայությունները

իրականացման համար անհրաժեշտ իրենց որակավորումների և համապատասխան փորձառության առկայության մասին:

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

Վերջին 10 տարիների ընթացքում՝

- Կազմակերպության ընդհանուր փորձառությունը /գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրությունը և կատարված աշխատանքների ցանկը/,
- Նմանատիպ կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, հատուկ դպրոցների, բարեկարգվող տարածքների կառուցման և վերակառուցման նախագծերի մշակման փորձը,
- Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում նախագծերի իրականացման փորձը:

Հետաքրքրված Խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք, տվյալ ծրագրի համար որպես խորհրդատուների ընտրությունը իրականացման համար առաջնորդող փաստաթուղթ հանդիսացող, Համաշխարհային բանկի ուղեցույցին՝ «Համաշխարհային բանկի փոխառունե-րի կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակնե-րում խորհրդատուների ընտրություն և վարձում», հունվար 2011թ., փոփոխված հուլիս 2014թ., Խորհրդատուների ուղեցույցներ, (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised in July 2014), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շա-հերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ ձեռ-նարկության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավե-լու նպատակով:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January 2011, revised in July 2014) 3.7 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» ընթացակարգին համաձայն:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասե-նյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ն:

ՀՏԶՀ-ի գրասենյակի հասցեն՝ ՀՀ, Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Գնումների վարչություն:

Հետաքրքրվածության հայտերը պետք է առաքվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2016թ. մարտի 9-ը, ժամը 17:00**:

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
ՀՀ, Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների վարչություն, 409 սենյակ,
Հեռախոս՝ (37410) 24-71-42
Ֆաքս՝ (37410) 24-01-59
Էլ-փոստ՝ procurement@atdf.am